



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«03» հուլիսի 2008թ.

N 28-Կ/Ն

ք.Ստեփանակերտ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆԿՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԿՈՂ ՎԱՐՉԱԿԱԼՎԱԾ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԸ ՍԵՎ ՑԵԼԻ ՏԱԿ ԹՈՂՆՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱԼԱԿԱՆ ԿՃԱՐԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 26-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 61 որոշման 56-րդ կետի «գ» ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող վարձակալված վարելահողերը սև ցելի տակ թողնվելու դեպքում վարձակալական վճարից ազատման արտոնության կիրառման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2008 թ. հուլիսի 3-ի
թիվ 28-Կ/Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՎԱՐՉԱԿԱԼԿԱԾ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԸ ՍԵՎ ՑԵԼԻ ՏԱԿ ԹՈՂՆՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱԼԿԱՆ ՎՃԱՐԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ

Սույն կարգով կարգավորվում են սև ցելի տակ թողնված համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող վարձակալված վարելահողերը վարձակալական վճարից ազատման արտոնության (այսուհետ՝ արտոնություն) կիրառման հարաբերությունները :

Արտոնությունից օգտվելու նպատակով համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող վարելահողերի վարձակալները դիմում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համապատասխան շրջանի վարչակազմ:

Արտոնության կիրառման ենթակա լինելը որոշելու նպատակով շրջանում ստեղծվում է հանձնաժողով՝ վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության բաժնի պետի գլխավորությամբ :

Հանձնաժողովը առնվազն երեք անգամ տեղում պարզում է սև ցելի մշակության ընթացքը : Ընդ որում 1-ին ստուգայցը կազմակերպվում է ուշ աշնան կամ ձմեռային ամիսներին, երկրորդ ստուգայցը գարնանային ամիսներին, իսկ վերջինը՝ հունիս ամսվա ընթացքում : Յուրաքանչյուր ստուգայցի արդյունքներով կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հանձնաժողովի և վարձակալի կողմից : Նշված արձանագրությունները մինչև հաշվետու տարվա հուլիսի 15-ը ներկայացվում են շրջանի վարչակազմի ղեկավարին :

Շրջանի վարչակազմի ղեկավարի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց եռօրյա ժամկետում կայացվում է որոշում՝ վարձակալին հաշվետու տարում վարձակալական վճարից ազատման արտոնության տրամադրման մասին, կամ համապատասխան հիմնավորումներով մերժվում արտոնության տրամադրումը:

Սույն կարգի կիրառման առումով հաշվետու տարի է համարվում որոշումը կայացնելու տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Արտոնության տրամադրման մասին որոշումը կազմվում է երկու օրինակից, որի մեկ օրինակը հիմնավորող փաստաթղթերի հետ պահվում է վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության բաժնում, երկրորդ օրինակը տրվում է վարձակալին, իսկ պատճենը՝ ներկայացվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը:

Շրջվարչակազմը մինչև հաշվետու տարվա օգոստոսի 15-ը վարձակալներին տրամադրված արտոնությունների վերաբերյալ տեղեկություններ է ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության համապատասխան շրջանի հարկային տեսչությանը՝ համաձայն կցվող ձևի:

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿԱՐՁԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆԿՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԿՈՂ ՍԵԿ ՑԵԼԻ ՏԱԿ ԹՈՂՆԿԱԾ ԿԱՐՁԱԿԱԼԿԱԾ ԿԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ԿԱՐՁԱԿԱԼՆԵՐԻՆ ԿԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ԿՃԱՐԻ ԳԾՈՎ ՏՐԱՄԱՂՐԿԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Իրավաբանական անձի անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	Հարկվճարողի հաշվառման (ֆիզիկական անձի սոցիալական ապահովության մտրոյ (կտրոյ) համարը)	Իրավաբանական հասցեն (ֆիզիկական անձի բնակության հասցեն)	Խողտոմարի հասցեն	Վարձակալության պայմանագրի				Արտոնության տրամադրման որոշման համարը և ամսաթիվը	Վարձակալական պայմանագրով նախատեսված վարձավճարի տարեկան գումարը	Վարձակալական վճարից ազատված վարելահողի տարածքը (հա)		Այլ նշումներ
				համար	կնքման ամսաթիվը	պետական գրանցման ամսաթիվը	մտրոյ ժամկետը			ջրովի	անջրղի	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13

_____ Շրջանի վարչակազմի ղեկավար

_____ ստորագրություն

_____ անուն, ազգանուն

